կասեան գաւառայ Փոխարքայի Օ. օգնականի Թիկնապահ Մեծ. Ալէքսանդր Անդրէէվիչ Գօն Կրէմէր։

Յիշեալ այցելուք նուիրական և հընդարեան Վայրիս արժանաւոր տեղերը տեսնելէ զկնի՝ ճաշ վայելեցին, և վերադարձան ասոի յԵրևան՝ կրկին ի Տփխիս երթալոյ համար։

ՆՈՒԻՐՔ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ։

Աղեքսանդրապօլում, (ուր գնացել էի բարեկամներիս հետ տեսութեան և օգափոխութեան համար), մի քանի բարեպաշտ և ազգասէր Պարոնները՝ իմանալով որ սկսել եմ Ս. Գայիանեան վանքում շինել փոքր դպրոց՝ բարեհաճել էին յօժար կամքով ժողովել իւրեանց մէջ և յանձնել ինձ հրէր Ե դրամ 40 ի նպաստ նոյն շինութեան։ Սեպուհ պարտաւորութիւն եմ համարում ինձ համար մատուցանել այստեղ հրապարակական շնորհակալութիւնս նուիրատու Պարոններին. իսկ նոցա անունները, ուրիշ շատ բարեպաշտ և ազգասէր նուիրատուների անուանց հետ միասին, կ'հրատարակեմ տարւոյս վերջում առանձին հաշուեցուցակով։

Վ. Ն. Հայր Ս. Գայիանէան Վանէի
Վ. Հան. Վարդապետ Բաստամեանց։

ՀԵՂԵՂ ՑԵՐԵՒԱՆ.

Երևան քաղաքն իւր վատ և անյարմար դիրքով գուցէ յետին տեղն է բռնում Արարատեան պատուական նահանգի մէջ, որով քիչ վնաս չէ իւր ժողովրդեան առողջութեան և բարգաւաճմանը։ Այս քաղաքը փակուած է մէկ ձորակաձև հեղեղատի մէջ, որին ասում են «Գետառ», և երեք կողմից պատած է լեռներով, բաց է նորա միայն արևմտեան կողմն, որ տեղից անցնում է Հրազդան գետն Հիւսիսից հարաւ։ Այս հեղեղատի տրամագիծը կամ յատակագիծը հաւասար է կամ աւելի բարձր քաղաքի երեք մասից, այն է Շահարից, Խանդաղաղից և Դամիրուլաղից։ Այս հեղեղատը ունի իւր ծոցումը այս մասերը և երբէք երբէք սպառնում է նոցա, որովհետև այս հեղեղատի մէջ են թափվում համարեա թէ բոլոր արևելեան հարաւ կոտայից լեռների հեղեղները և անձրևաջրերը, ոչ միայն կոտայից լեռների, այլ և Գառնուայ և մի մասին Գեղամայ։ Այս հեղեղատից վազում է ՀՐԱԶԴԱՆ ասուած ջուրն, որ արբուցանում է այս մասերի պարտէզները, և ժողովուրդը, և այս ջուրն է Երևանայ ամենապատուական և քաղցրահամ ջուրը։

Այս հեղեղատից յանկարծ թափեց ամենամեծ և սարսափելի հեղեղ Օգոստոս ամսոյ 14 երեկոյեան ժամի 4½ին՝ երբ փակուած էր երկինք թուխ ամպերով, մանաւանդ արևելեան կողմն քաղաքիս, և լսվում էր երբեմն խուլ և անընկատելի որոտմունքի ձայն, որ հետ զհետէ սաստկանում էր, և ամպերը կախվում էին աւելի ցած, և բարակ անձրև էր ցօղում։ Այն ինչ ժամն 4½ չանցած յանկարծ ահագին որոտմունք և ճայթմունք կլսվէր երկնքից, կարծես թէ հարիւրաւոր կայծակներ և շանթեր կնետուէին երկիր, նոյն րոպէի մէջ ինչ ահի և երկիւղի մէջ կպրտնուէր ամբողջ քաղաքի ժողովուրդը, կարծես սպասում էր րոպէ առ րոպէ երկնից վրէժխնդրութեան, և ահա ահեղ և սարսափելի գոռում և դղրդում, ինչպէս թէ հարիւրաւոր և հազարաւոր ահագին քարեր և ժայռեր լեռան բարձրութիւնից վայր գլորուին մէկ մէկու դպչելով կամ զարնվելով։ Շատ մարդիկ այս սարսափե ի ձայնից տարակուսուած ահով և դողով պատկառկնեային երկնքին, արտասուքներ կիջեցնէին և յոգւոց հանելով կասէին այլ ևս չէ մեզ յոյս տեսնելոյ աշխարհը, մեր հարազատները, և այսպէս պաղած կնայէին թէ ի՞նչ պէտք է լինի այս. ոմանք գոռում էին՝ թէ ջրհեղեղ է, և այլք թէ որոտմունք է, և կէսք թէ կայծակներ է նետվում և լեռներ է քանդվում, մինչև բարձրիցն տեսնվեցաւ դիզուած հեղեղն, որ ահագին յորդութեամբ կիջանէր վերոյիշեալ հեղեղատից արմատախիլ ուած հաստաբուն ընկուզներ և ուռիներ և շատ ժայռեր